ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

<<08>><< մայիսի>> 2019թ. N 184

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ.Մաթևոսյանին

Մեծարգո պարոն Մաթևոսյան

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 7-ի <<Համայնքի 2019 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին >> N64-Ն որոշումը: :

Առդիր 52 / հիսուներկու/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՎՀԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ.՝ Ա. Սաֆարյան

1139համայնքՄերձավանԵրևանյանխճուղի 2-րդփողոց N1,հեռ. (096) 11-00-44,էլ. փոստmerdzavan.armavir @ mta.gov.am

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 01-08888-2019
08 05 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

7 մայիսի 2019 թվականի N64-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N65-Ն որոշման հավելվածի 5-րդ կետը, որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N65-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումները՝

1) 08 բաժնի 2-րդ խմբի 3-րդ դասի 5113 հոդվածով նախատեսված գումարից պակասեցնել 500 000 ՀՀ դրամ և այն ուղղել հետևյալ ծախսերին.

ա. 200 000 ՀՀ դրամն ուղղել 08 բաժնի 2-րդ խմբի 3-րդ դասի 5122 հոդվածին.

բ. 300 000 ՀՀ դրամն ուղղել 08 բաժնի 2-րդ խմբի 3-րդ դասի 5129 հոդվածին.

2) 09 բաժնի 2-րդ խմբի 2-րդ դասի 4241 հոդվածով նախատեսված գումարը՝ 300 000 ՀՀ դրամն ուղղել 08 բաժնի 3-րդ խմբի 2-րդ դասի 4234 հոդվածին.

3) 08 բաժնի 3-րդ խմբի 2-րդ դասի 4234 հոդվածով 4-րդ եռամսյակում նախատեսված 400 000 ՀՀ դրամը տեղափոխել 2-րդ եռամսյակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՎՀԱՏ ՍԱՐԳՍՅԱՆ

2019 թվականի մայիսի 7

ք. Մերձավան